Վիլյամ Սարոյան

Նարինջները

Նրան ասացին .

— Երկու ամենամեծ նարինջները ձեռքիդ կկանգնես փողոցի անկյունում, և երբ ավտոմեքենա անցնի կողքովդ, կժպտաս ու նարինջները կպարզես: Եթե ցանկանան գնել՝ յուրաքանչյուրը հինգ ցենտ, — ասաց հորեղբայր Զեյքը, — երեքը՝ տասը ցենտ, մի դյուժինը՝ երեսունհինգ: Լայն կժպտաս, — ասաց: — Լյո՛ւք, դու կարող ես ժպտալ, չէ՞: Դու երբեմն ժպտալու շնորհք ունես, չէ՞:

Շատ չարչարվեց, որպեսզի ժպտա, բայց հորեղբայր Զեյքը դեմքը ծամածռեց, ու նա հասկացավ, որ սարսափելի ժպիտ էր: Հույս ուներ, որ կարող է որոշ մարդկանց նման բարձրաձայն ծիծաղել, միայն թե այդ մարդիկ իր նման վախեցած չէին, և ամեն ինչ փչացավ:

— Կյանքումս այսքան լուրջ տղա չեմ տեսել, — ասաց հորեղբայր Զեյքը, — Լյո՛ւք:

Հորեղբայրն այնքան կռացավ, որպեսզի իրենց գլուխները հավասարվեն և ուղիղ նրա աչքերին նայի, ու շարունակեց հետը խոսել:

— Լյո՛ւք, — ասաց, — ոչ-ոք նարինջ չի գնի, եթե չժպտաս: Մարդիկ սիրում են տեսնել, թե ինչպես է փոքրիկ տղան ժպտում և նարինջ վաճառում: Դա նրանց զվարճացնում է:

Նա լսում էր, թե ինչպես է հորեղբայրը խոսում, նայում էր նրա աչքերին և ըմբռնեց բառերը: Բայց նա միայն զգում էր, որ Զեյքն էլ է շփոթված: Եվ տեսավ, թե ինչպես հորեղբայրը ոտքի ելավ ու տնքաց, հենց այնպես, ինչպես հայրն էր տնքում:

— Լյո՛ւք, — ասաց հորեղբայրը, — դու երբեմն կարող ես ծիծաղել, չէ՞:

— Չի կարող, — ասաց Զեյքի կինը: — Եթե այդքան վախկոտ չլինեիր, ինքդ կգնայիր ու նարինջները կվաճառեիր: Դու էլ հիմա այն վիճակում ես, ինչ եղբայրդ, — ասաց նա, — հողի տակ, մեռած:

Սա էր, որ Լյուքին թույլ չէր տալիս ժպտալ . այս կնոջ սովորական խոսելաձևը, ոչ բառերը, այլ ձայնի մեջ եղած ստորությունը, որով անընդհատ կշտամբում էր հորեղբայր Զեյքին: Եվ ինչպես կարող էր սպասել, թե Լյուքը կժպտա կամ լավ կզգա, եթե ինքն անընդհատ ասում էր, թե իրենք բոլորն էլ վատն են, ողջ ցեղը վատն է:

Զեյքը հոր կրտսեր եղբայրն էր և նման էր հորը: Իհարկե, Զեյքի կինը միշտ ստիպված էր ասել, թե լավ է, որ հայրը մեռած է, հենց թեկուզ այն բանի համար, որ առևտրական գործերում պիտանի չէր: Նա միշտ ասում էր Զեյքին .

— Սա Ամերիկա է: Պետք է շուրջդ նայես, մարդկանց հետ շփվես ու ստիպես, որ նրանք քեզ սիրեն:

Եվ Զեյքը միշտ պատասխանում էր .

— Ստիպեմ, որ նրանք ինձ սիրե՞ն: Ինչպե՞ս կարող եմ ստիպել, որ ինձ սիրեն:

Եվ կինը միշտ բարկանում էր ամուսնու վրա ու ասում .

— Օ՛հ, հիմարի մեկը: Եթե հղի չլինեի, կգնայի Ռոզենբերգի մոտ աշխատելու և քեզ երեխայի նման կպահեի:

Զեյքն էլ այն նույն հուսահատ հայացքն ուներ, ինչ Լյուքի հայրը, և միշտ ինքն իր վրա զայրանում էր ու ցանկանում, որ մյուսներն ուրախ լինեն: Զեյքը միշտ նրան

խնդրում էր, որ ժպտա:

— Լա՛վ, — ասաց Զեյքը, — լա՛վ, վա՛վ, սպանի՛ր ինձ, խենթացրո՛ւ: Անպայման: Կմեռնեմ, կմեռնեմ: Տասն արկղ նարինջ, տանը ոչ մի պեննի և ուտելու ոչինչ: Ավելի լավ է մեռնեմ: Կանգնեմ փողոցում ու նարինջնե՞ր պարզեմ: Գուցե մի սայլ առնեմ ու փողոցնե՞րն ընկնեմ: Ոչ, ավելի շուտ կմեռնեմ:

Հետո Զեյքը դեմքը ծամածռեց, և նա այնքան տխուր էր, կարծես աշխարհում այլևս ոչ ոք այդքան տխուր չէ, նույնիսկ Լյուքը, և տղան ուզում էր, որ հանկարծ լաց լինելու ցանկություն չունենա այն բանի համար, որ Զեյքն այդքան տխուր է: Եվ այդ ամենից հետո էլ Զեյքի կինն այնպես կատաղեց, ինչպես երբեք ու սկսեց այնպես բղավել, ինչպես բղավում էր, երբ իսկապես կատաղած էր լինում, և կարելի էր զգալ, թե այդ ամենը որքան սոսկալի է, քանզի նա ոչ թե տխուր ձայնով էր բղավում, այլ՝ կատաղած, ու Զեյքին հիշեցնում էր այն բոլոր հաշիվների և այն բոլոր անտանելի տարիների մասին, որ անցկացրել էր ու այն երեխայի մասին, որ պետք է ծնվեր և ասաց .

— Ինչի՞ համար, ո՞ւմ է հարկավոր, որ մի հիմար էլ աշխարհ գա:

Հատակին մի արկղ նարինջ կար, և նա վերցրեց երկու հատ ու լաց լինելով ասաց .

— Վառարանում կրակ չկա, այն էլ նոյեմբերին, բոլորս սառչում ենք: Տունը պետք է մսահոտով բուրեր: Ա՛ռ, կե՛ր: Կե՛ր քո նարինջները: Այնքան կեր, որ մեռնես, — և նա լաց եղավ:

Զեյքն այնքան տխուր էր, որ չէր կարող խոսել: Նա նստեց, սկսեց ետ ու առաջ ճոճվել . գժի պես էր: Եվ դեռ ասում են ծիծաղիր: Զեյքի կինն էլ նարինջները ձեռքին անընդհատ դուրս ու ներս էր անում, լալիս էր ու երեխայի մասին խոսում:

Որոշ ժամանակ անց նա դադարեց լաց լինել:

— Այժմ նրան տար անկյունը, — ասաց, — և տես, գուցե կարողանա մի քիչ փող աշխատել:

Զեյքն իսկապես խուլ էր . ամեն դեպքում, այդպես էր թվում: Նա նույնիսկ գլուխը չբարձրացրեց: Եվ կինը բղավեց .

— Նրան տար անկյունը: Ասա, որ ժպտա մարդկանց: Մենք պետք է ուտենք:

Ի՞նչ իմաստ ունի ապրելը, երբ ամեն ինչ ապականված է, և ոչ ոք չգիտե, թե ի՞նչ պետք է անի: Ի՞նչ կարիք կա դպրոց գնալ, թվաբանություն սովորել, բանաստեղծություններ կարդալ, բաղրիջաններ նկարել և նման այլ բաներ: Ի՞նչ օգուտ ցուրտ սենյակում նստել մինչև քնելու ժամը և լսել, թե ինչպես են Զեյքն ու կինն անընդհատ կռվում, և քնելու գնալ ու լաց լինել, և արթնանալ ու տեսնել տխուր երկինքը, և զգալ սառը օդը ու դողալ, և դպրոց գնալ ու նախաճաշին հացի փոխարեն նարինջ ուտել:

Զեյքը վեր թռավ ու սկսեց կնոջ վրա գոռալ: Նա ասաց, որ կսպանի կնոջը և հետո դանակն իր սիրտը կխրի, և կինն ավելի շատ լաց եղավ, պատռեց շորը մինչև գոտկատեղն ու ասաց . «Դե, ավելի լավ է բոլորս մեռնենք, սպանի՛ր», սակայն Զեյքը նրան թևերի մեջ առավ, ու նրանք քայլեցին դեպի հարևան սենյակը, և Լյուքը լսում էր, թե ինչպես էր կինը լալիս ու համբուրում նրան ու ասում, որ նա պարզապես մի երեխա է, մի մեծ երեխա, և որ ինքը նրան մոր պես անհրաժեշտ է:

Տղան կանգնած էր անկյունում, և այդ ամենն այնպես արագ էր կատարվել, որ նա չէր զգացել, թե որքան է հոգնել, բայց շատ էր հոգնած ու սոված: Նա նստեց: Ի՞նչ օգուտ ունի ապրելը, եթե աշխարհում բոլորովին մենակ ես և ոչ մայր ունես ու ոչ էլ հայր և ոչ մեկը, որ քեզ սիրի: Նա լաց լինելու ցանկություն ունեցավ, բայց ի՞նչ օգուտ լաց լինելուց, եթե դա ամեն դեպքում ոչ մի օգուտ չի տալու:

Որոշ ժամանակ անց Զեյքը դուրս եկավ սենյակից և փորձեց ժպտալ:

— Այն ամենն, ինչ պետք է անես, — ասաց, — ձեռքումդ երկու մեծ նարինջ բռնելն ու ավտոմեքենայով մոտովդ անցնողներին առաջարկելն ու ժպտալն է: Մի արկղ նարինջ վաճառելը քեզնից համարյա ժամանակ չի խլի, Լյո՛ւք:

— Կժպտամ, — ասաց տղան, — մեկը՝ հինգ ցենտ, երեքը՝ տասը, մի դյուժինը՝ երեսունհինգ:

— Այդքանը, — ասաց Զեյքը:

Զեյքը նարինջների արկղը վերցրեց հատակից ու շարժվեց դեպի ետնամուտքը:

Փողոցում շատ տխուր էր: Զեյքի ձեռքին նարինջների արկղն էր, Լյուքը քայլում էր կողքից ու լսում, որ պետք է լայն ժպտա: Երկինքը տխուր էր, ու ծառերին տերևներ չկային, և փողոցը տխուր էր, ու շատ ծիծաղելի էր . նարինջների բույրը մաքուր էր ու դուրեկան, և դրանք այնքան գեղեցիկ էին, որ շատ ծիծաղելի էր: Նարինջներն այնքան գեղեցիկ էին, իսկ իրենք՝ այնքան տխուր:

Վենտուրա փողոցի անկյունն էր, որտեղով անցնում էին բոլոր ավտոմեքենաները, և Զեյքն արկղը մայթին դրեց:

— Միայն փոքր տղաների մոտ է լավ ստացվում, — ասաց, — պահել ու պատրաստ լինել ժպտալու կողքովդ ավտոմեքենաներով անցնող մարդկանց:

Թվում էր, թե երկար ժամանակ է անցել, երբ մի մեքենա տեսավ, որը քաղաքից գալիս էր ճիշտ դեպի իր կողմը, և երբ այն մոտեցավ, տեսավ, որ մի տղամարդ էր վարում մեքենան, իսկ ետևի նստատեղին մի տիկին էր երկու երեխաների հետ: Նա շատ լայն ժպտաց, երբ նրանք շատ մոտ էին, սակայն չէր երևում, թե պատրաստվում էին կանգնել, և նա նարինջները ճոճեց ու ավելի մոտեցավ փողոցին: Դեմքերը շատ մոտիկից տեսավ և մի քիչ ավելի լայն ժպտաց: Շատ լայն չէր կարող ժպտալ, որովհետև դրանից այտերը հոգնում էին: Նրանք չկանգնեցին և նույնիսկ չպատասխանեցին ժպիտին: Ավտոմեքենայում նստած փոքրիկ աղջիկը դեմքը ծամածռեց՝ ցույց տալու համար, որ նա ոչինչ է: Ի՞նչ օգուտ փողոցի անկյունում կագնել, փորձելով նարինջ վաճառել այն մարդկանց, ովքեր ծամածռում են դեմքերը, որովհետև դու ժպտում ես և ցանկանում դուր գալ:

Ի՞նչ օգուտ մկաններդ ցավեցնել հենց միայն այն բանի համար, որ մարդկանց մի մասը հարուստ է, իսկ մյուսները՝ աղքատ, և որ հարուստներն ուտում են ու

ծիծաղում, իսկ աղքատները չեն ուտում և անընդհատ պայքարում են ու իրար ասում, որ պետք է դրանց սպանել:

Նա թևն իջեցրեց, դադարեց ժպտալ ու նայել հակահրդեհային ջրածորակին և դրա ետևի ջրհորդանին և ջրհորդանի ետևի փողոցին՝ Վենտուրային, փողոցի երկու կողմով ձգվող տներին, տներում եղած մարդկանց և փողոցի վերջում գտնվող գյուղին, որտեղ այգիներ ու մրգաստաններ էին, գետակներ ու մարգագետիններ և հետո լեռներ և լեռների ետևում ավելի շատ քաղաքներ ու ավելի շատ տներ, փողոցներ ու մարդիկ: Ի՞նչ օգուտ կա ապրել աշխարհում, երբ նույնիսկ չես կարող հակահրդեհային ջրածորակին նայել առանց լաց լինելու ցանկության:

Մեկ այլ ավտոմեքենա էր գալիս փողոցն ի վեր, և նա բարձրացրեց թևն ու սկսեց նորից ժպտալ, սակայն երբ ավտոմեքենան անցավ կողքով, տեսավ, որ մարդը նույնիսկ իր կողմը չէր նայում: Մեկը հինգ ցենտով նրանք կարող էին նարինջ ուտել: Հաց ու միս ուտելուց հետո կարող էին նարինջ վայելել: Կլպել, հոտոտել գեղեցիկ բուրմունքը և ուտել: Կարող են կանգնեցնել մեքենաները և գնել երեք հատը տասը ցենտով: Հետո մի այլ ավտոմեքենա անցավ կողքով, մինչ նա ժպտում էր ու թևը թափահարում, բայց մարդիկ նրան միայն նայեցին և՝ այդքանը: Եթե գոնե պատասխանեին ժպիտին, այդքան վատ չէր լինի, որքան միայն կողքով անցնելն ու նույնիսկ չժպտալը: Բազմաթիվ ավտոմեքենաներ անցան կողքով և, թվում էր, թե նա պետք է նստեր, դադարեր ժպտալ ու լաց լինել, քանի որ անտանելի էր: Ու մի նարինջ էլ չէին ուզում և նրանց դուր չէր գալիս, որ նա այնպես էր ժպտում, որ հորեղբայր Ջեյքի ասելով, նրանց պետք է դուր գար: Նրանք պարզապես տեսնում էին նրան և ոչինչ ավելի:

Արդեն բավականին մութ էր և, ինչից նա այդքան վախենում էր, ողջ աշխարհը կարող էր վախճանվել: Գուշակեց, որ այդտեղ կանգնած կլինի՝ ձեռքը պարզած ու կժպտա, մինչև աշխարհի վերջը գա:

Նա պարզապես գուշակեց, որ այդ էր այն ամենը, ինչի համար ծնվել էր ինքը՝ կանգնել անկյունում ու մարդկանց պարզել նարինջները և այտերով գլորվող մեծ-մեծ արցունքակաթիլներով ժպտալ նրանց մինչև աշխարհի վերջը, և ամեն ինչ սև է ու դատարկ, իսկ նա կանգնած ժպտում է, մինչև այտերը կցավեն, հետո

լալիս է, որովհետև նրանք նույնիսկ չեն ցանկանում պատասխանել իր ժպիտին և, ինչից որ նա վախենում էր՝ ողջ աշխարհը կարող էր պարզապես ընկնել մթության գիրկը ու վախճանվել, և Ջեյքը մեռած կլիներ, ու նրա կինն էլ մեռած կլիներ, և բոլոր փողոցները, տները, մարդիկ, այլևս ոչ մի տեղ ոչ-ոք չէր լինի, գոնե մի մարդ կամ մի դատարկ փողոց կամ մի մութ պատուհան և կամ փակ դուռ, որովհետև նրանք չէին ուզում նարինջ գնել և չէին ժպտում նրան, և ողջ աշխարհը կարող էր վախճանվել: